ԱԶԴ

– Պրն. Փիրումյան, դուք Հայաստանում բնապահպանական ֆիզիկայի հիմնադիրներից եք: Ի՞նչ կասեք գիտության այդ նոր բնագավառի վիճակի եւ զարգացման հեռանկարների մասին:

– Բնապահպանական ֆիզիկան, որպես գիտության ինքնուրույն ուղղություն, սկսել է զարգանալ 80-ական թվականների կեսերից. [illegible]

# Հայկական գիտությունը կարող է դուրս գալ միջազգային շուկա

[illegible] 80 գիտական աշխատությունների, 14 գյուտերի եւ հայտնագործությունների հեղինակ Գեւորգ Փիրումյանը:

[illegible]

– Ուրեմն ինձ հայտնի է, դուք բազմաթիվ գյուտերի հեղինակ եք: Խնդրում եմ մի քանի խոսքով ներկայացնել ձեր գործունեության այդ ոլորտը:

[illegible]

ԾԱՆՐ ԽՈՀԵՐ

# Քվեատուփի մեզ պետք չէ...

1991 թ. աշունն էր: Անկախության մեր հանրաքվեին ներկա գտնված շվեյցարացի դիտորդները մինչեւ վերադառնալը զեկուցել էին սահմանադրական ճանապարհով իր անկախությանը ձգտող հայ ժողովրդի խանդավառության մասին: Նշել էին նաեւ, որ [illegible], մեր քվեատուփերի խղճուկ վիճակի մասին: Տեղի կանտոնալ կառավարությունը, ինքն էլ տպավորված անկախ պետականության եւ ժողովրդավարական հասարակարգ ստեղծելու մեր վճռական սկզբունքներից, բարի խորհուրդն է ունենում իրեն [illegible] ձեւով նպաստելու նորանկախ Հայաստանի կառավարությանը: Շուտով դեսպանական նամակ է հղում մեր կառավարությանը եւ առաջարկում 300 հատ քվեատուփ նվիրել Հայաստանին՝ հաջորդ քվեարկությունների ժամանակ օգտագործելու նպատակով:

Հիմա արդեն կարելի է պատկերացնել, թե շվեյցարացիների այդ նամակը ինչպիսի՞ տարակուսանքով է ընդունվում մեր կառավարությունում: Վարչապետն իր պատասխան նամակում շվեյցարական կողմին հայտնում է, որ Հայաստանն այսօր պետք ունի ոչ թե քվեատուփի, այլ... բրինձի, շաքարի, կարագի, ջերմության: Մեր վարչապետի նամակը, որն անշուշտ նրա հոգսաշատ առօրյայի անկեղծ եւ անմիջական արտահայտությունն էր (չմոռանանք, խոսքը 1992 թ. դաժան ձմեռվա նախաշեմի մասին է), իր հերթին, կարելի է պատկերացնել, ինչպիսի՞ տարակուսանքով է ընդունվում շվեյցարացիների կողմից: Կանտոնալ կառավարության անդամները, ըստ ստացված անձնական տեղեկությունների, նույնիսկ վիրավորվում են այդ պատասխանից: Շվեյցարիան հայտնի է կանտոնալ եւ դաշնակցային կառավարման իր բարդ ու փխրուն հավասարակշռությունը ընտրողի, ներկայացուցչական մարմինների միջոցով պահպանելու ու ամրապնդելու ավանդույթներով: Շվեյցարացիք իրենց ընտրությունների եւ քվեարկությունների ամբողջ մեխանիզմը հասցրել են իրենց արտադրած ժամացույցների ճշգրտության եւ հուսալիության մակարդակին, եւ այդ համակարգում նրանց քվեատուփերը՝ թափանցիկ, [illegible] շվեյցարական խաչի նշանով, մի տեսակ՝ նրանց հպարտության աղբյուրն են հանդիսանում, խորհրդանիշ շվեյցարական ժողովրդավարության: Հետեւաբար, զարմանալի չպետք է լինի նրանց զարմանքն ու հիասթափությունը մեր կառավարության պետի «պրոզայիկ» պատասխանից:

Խոստովանեմ, այն ժամանակ ես էլ, իմ շվեյցարահայ բարեկամների նման, որոնք պատմել էին միջադեպի այդ մասին, նեղսրտել էի մեր վարչապետի պատասխանից: Մտածում էի, որ նա կարող էր, պետք էր, շնորհակալությամբ, նույնիսկ մի քիչ չափազանցված երախտագիտությամբ ընդուներ այդ առաջարկը եւ հետո միայն խոսեր բրինձի, շաքարի, կարագի եւ այլ պետքերի մասին: Պետք է հիշեցներ, օրինակ, որ քաղցած ու սառած մարդը չի կարող ժողովրդավար լինել, որ ժողովրդավարությունը ազատ մարդկանց ինքնակառավարման համակարգն է, դաշինքը, որ միայն կուշտ մարդը կարող է ազատ լինել, որ...

Սակայն հիմա, հուլիսի 5-ի ընտրություններից հետո, ես հասկանում եմ, որ այն ժամանակ լրիվ սխալվել եմ: Այն ժամանակ մեր վարչապետը ճիշտ է վարվել մերժելով շվեյցարացիների էկստրավագանտ այդ առաջարկը: Մենք շվեյցարական քվեատուփի պետք չունենք, առանց դրանց էլ յոլա կգնանք: Մեզ դեռեւս պետք է բրինձ, շաքար, կարագ: Իսկ ինչ վերաբերում է բուն քվեարկություններին, մենք լավ գիտենք բոլոր ժամանակների ամենագործնական մարդու՝ Ստալինի հայտնի միտքը՝ կարեւորը ինչպես քվեարկելը չէ, այլ ինչպես հաշվելը... Իսկ մենք հաշվել գիտենք, թեկուզ փոքր սխալներով:

Այո, ես հիմա հասկանում այս բոլորը: Միայն դեռեւս չեմ հասկանում մեկ բան՝ ի՞նչ կարիք կա կուրծք ծեծելու, թե մենք իսկական ժողովրդավարական երկիր ենք, այնքան կուսակցություն ունենք (երբ պետք լինի՝ 10 հատ էլ «Շամիրամ» կստեղծենք), այնքան թերթ ունենք, այնքան... Ի՞նչ կարիք կա մարդկանց գոռալ համոզելու, որ մենք ոչ միայն ռամկավար եւ ազատական ենք, այլեւ՝ արմատական տեսակի ռամկավար եւ ֆունդամենտալ տեսակի ազատական: Արեւմուտքը, Միջազգային արժութային հիմնադրամն ու Համաշխարհային բանկը մեզնից այդքան ժողովրդավարություն չեն պահանջում, չեն ակնկալում: Դա շատ է: Նրանք շատ լավ գիտեն ժողովրդավարության մեր չափը, ցանկությունը, հնարավորությունները: Եւ երբ [illegible] կուրծք ծեծել, այլեւ մեզ լուրջ չեն ընդունի: Հետեւաբար կարիք չունենք խաբելու: Պետք չէ:

Պետք չէ խաբել նաեւ մեր ժողովրդին: Պետք չէ նրան ներշնչել, որ իր ձայնն ու կամքն են կանխորոշում մեր բոլորի կեցությունն ու կացությունը: Ժողովուրդը հիասթափվում է ժողովրդավարությունից, այն շփոթելով ընտրական այլանդակության հետ: Գուցե մի օր իսկապես ուզենանք ժողովրդավար լինել: Այն ժամանակ ինչպե՞ս ենք համոզելու ժողովրդին, թե ժողովրդավարությունն իսկապես լավ բան է, թե կարելի է նաեւ արդար ընտրություններ կազմակերպել եւ ձայները ճիշտ հաշվել:

Շատ ավելի պարկեշտ եւ ճիշտ էր Սիրիայի տիրակալ Հաֆեզ Ասադը, երբ իրեն այցելած ամերիկացի լրագրողներին ասում էր. «Ինձ ժողովրդավարության դասեր մի՛ տվեք. եթե իմ երկիրն էլ Միացյալ Նահանգների մակարդակն ունենար, ես ավելի կատարյալ ժողովրդավարություն կստեղծեի, քան ամերիկյանը»:

Այս իմաստով ինձ շատ ավելի դուր է գալիս կառավարամետ որոշ թերթերի վերջին օրերին գրածները՝ «Դուք ի՞նչ էիք ուզում, Հայաստանը Մ. Նահանգներ, Մեծ Բրիտանիա կամ Ֆրանսիա չէ: Այդ երկրներում ժողովրդավարությունը զարգացման 100, 200 եւ ավելի տարիների ճանապարհ է անցել: Ի՞նչ կա որ, մենք էլ կսպասենք 100, 200 եւ ավելի տարիներ:

Շվեյցարական քվեատուփի մեզ պետք չէ: Մենք ավելի լավ քվեատուփեր կսարքենք, երբ ժամանակը գա: Մինչ այդ, մեզ բրինձ է պետք, շաքար ու կարագ:

[illegible]

SARTARABAD Co. LTD

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՍՊԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է

ԲԵՅՐՈՒԹ
14 օրյա տուրիստական ուղեւորության ուղիղ օդային միջանցքով, առանց հյուրանոցի

ԹԵՀՐԱՆ
7 օրյա տուրիստական ուղեւորություն, ավտոբուսով, 4 աստղանի հյուրանոցում, 2 անգամ սնունդ

ԲԵՅՐՈՒԹ
7-օրյա տուրիստական ուղեւորություն ինքնաթիռով: Ուրախ ժամանց, հաճելի հանգիստ միջերկրական ծովի ափին, 4 աստղանի հյուրանոցում, 2 անգամ սնունդ

«Էրեբունի» հյուրանոց, 2-րդ մասնաշենք, 327 սենյակ, Հեռ. 565576

A STYLE

digitised by A.R.A.R.@

